

ՀՏԴ՝ 81-26

ՊԱՐՄԿԵՐԵՆ ԲԱՌԵՐԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Մաթենիկ Եղիազարյան

ՀԱՊՀ լեզուների գիտակրթական կենտրոն

Բանալի բառեր՝ պարսկերեն բառեր, տեղանուններ, անձնանուններ, խոսքային միջավայր, էկզոտիզմներ տարաշխարհիկ բառեր, գեղարվեստական գրականություն:

Գրական գործունեության ընթացքում Ա. Ավագյանը հաճախ էր անդրադառնում իր ծննդավայրին, այն դեպքերին ու իրադարձություններին, հերոսներին, որոնք անջնջելի հետք են թողել իր հիշողություններում, և բնական է, որ նրա պատմվածքներում և վեպերում տեղ են գտել պարսկերեն բառեր ու կապակցություններ, որոնք նպաստում են տպավորիչ ներկայացնելու արևելյան միջավայրը, այն առանձնահատուկ կոլորիտը, որը բնորոշ է պարսկական կենցաղին: Ծննդավայրն իր կնիքն է դրել նրա գրական աշխարհայացքի ու լեզվամտածողության վրա:

Նախաբան. 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականությունը նշանավորվեց թեմատիկ-գաղափարական և կառուցվածքային-արտահայտչական ձևերի ինքնատիպ տեղաշարժերով, որոնք կարևոր նշանակություն ունեցան գրականության զարգացման համար: Գրական ասպարեզ եկան անվանի գրողներ, մտավորականներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի ներդրում ունեցավ հայ նորագույն գրականության զարգացման գործում: Գեղարվեստական գրականության մեջ հաստատուն տեղ ունեցավ Արևելքի և սփյուռքահայության կյանքի թեմատիկան, որը հայտնաբերեց այդ աշխարհի շատ բնութագրական կողմեր, նաև գրական նոր անհատականություններ: Այդ անհատականությունների առաջին շարքում էր շնորհալի մի արձակագիր, անհավասար մի գրող՝¹ Աբիգ Ավագյանը, որը գրականություն բերեց «տաք հարավի» շունչն ու զգացողությունը, արևակեզ գույներ ու երանգներ²:

¹ Տե՛ս Աղաբաբյան Ս., «Մովեստական գրականություն», Եր., 1958, №8, էջ 193:

² Տե՛ս Արզումանյան Լ., «Գարուն», Եր., 1985, №6, էջ 66:

Որպես գրող՝ Ավագյանը ձևավորվել է իրանական միջավայրում: «Իրանական թեմատիկան Ա.Ավագյանի պատմվածքների մեծ մասի նյութն է: Կենցաղի նկարագրության մեջ լինելով բավականաչափ ճշգրիտ, մարդկային փոխհարաբերությունների պատկերման մեջ սևեռուն դիտող՝ Ավագյանը իրանական կյանքի երևույթների վերարտադրության մեջ հրաժարվեց արևելյան էկզոտիկայի ու արտաքին պուժետահորինման տարածված գայթակղությունից: Առեղծվածային արկածայնությունն Ավագյանի լավագույն պատմվածքներում փոխարինեց երևույթների հոգեբանական մեկնաբանությանը»³:

Աբիգ Ավագյանը մեր գրականության մեջ բերեց նոր կյանքի նկարագիր, նոր թեմատիկա, որում ամբողջապես արտացոլեց Իրանի կյանքը, այդ աշխարհի «խեղդվելու չափ հեղձուցիչ ու գաղջ» առօրյան, մարդկային հարաբերություններն ու սոցիալական հակասությունները: «Պետք է խոստովանեմ,-գրում է նա,-որ ես Իրանում խորապես ծանոթացա հասարակ ժողովրդի կյանքին և կենցաղին, նրա երգերին ու վերքերին, որոնք, ինչպես գիտեք, հետագայում իմ լույս տեսած գրքերի մեծ մասի բովանդակությունը կազմեցին: Առանց Իրանի հարավը գնալու, իհարկե, ինձ չէր հաջողվի գրել «Հարավային տենդ» հուշագրությունների շարքը»⁴: Իրանի հասարակական-քաղաքական կյանքին հեղինակն անդրադառնում էր հաճախակի, ստեղծագործական որոնումների ողջ ընթացքում:

Իրանի կյանքի և կենցաղի մանրամասնությունների նկարագիրը Ավագյանի ստեղծագործություններում ունի նաև ճանաչողական նշանակություն:

Գեղարվեստական ստեղծագործություններում գրողներից շատերը տարբեր ազգերի հերոսների, միջավայրի, ինչպես նաև տեղական կոլորիտ ստեղծելու նպատակով օգտագործում են օտար բառեր: Իրենց ոճական ինքնատիպ երանգի շնորհիվ այդ բառերը կարևոր դեր են կատարում կերպարների խոսքի տիպականացման գործում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հեղինակն այդպիսի բառեր հիմնականում օգտագործում է օտարազգի հերոսների բառապաշարում՝ նրանց սոցիալական, ազգային պատկանելությունն ընդգծելու և խոսքը ոճավորելու նպատակով:

Ավագյանի վեպերում և պատմվածքներում տեղ գտած պարսկերեն բառերը կարելի է բաժանել մի քանի խմբի.

ա) Պարսկական միջավայրի երանգավորմանը նպաստում են համապատասխան առօրյան և կենցաղն արտացոլող ստեղծագործություններում գործածված պարսկական անձնանուններն ու տեղանունները, որոնք տարածված

³ Աղաբաբյան Ս., Սովետահայ գրականության պատմություն, հ. 2, Եր., 1965, էջ 446:

⁴ «Գրական թերթ», 1979, 21 սեպտեմբերի:

են մահմեդական ժողովուրդների մեջ: Օրինակ՝ «Եկե՛ք ծանոթանանք. այս ընկերը, որ հիմա նստել է մեր դիմաց, *Ղոչամին* է, այս *Ահմադիանն* է, այս *Բալալին*, այս մեր *Ռազեղին* է, մեկը, որ երբ ասում էս «Օդաքս», քիչ է մնում մարդ խժոխ, այս *Ռեզան* է, այս *Փարվիզին...*» «Պ, 122, 1965»:

Պարսկական տեղանունների բաղադրիչների սեռական հոլովի իմաստն արտահայտվում է հատկացուցիչ-հատկացյալ իզաֆետային կապով⁵: Օրինակ՝ *Թանգե-Մալավի* «Պ, 141, 1965», *Շահրե-Շադ* (Պ, 174, 1962), *Քուհե-Մար* «ՎՀ, 489» և այլն:

Պարսկական որոշ անձնանուններ և տեղանուններ համապատասխան խոսքային միջավայրում բացատրվում են հայերեն համանշանակներով: Օրինակ՝ «Աղջկա անունը տարօրինակ էր՝ *Ճեթնե*, հայերեն այդ նշանակում է «*Դավ*» (ՎՀ, 485), «Ճաշարանը կոչվում է «*Բանաֆշե*», այսինքն՝ «*Մանուշակ*» (ՎՀ, 468) և այլն:

բ) Խոսքը հավաստի, համոզիչ դարձնելու նպատակով հեղինակը հերոսների խոսքում օգտագործում է ողջույնի պարսկերեն ձևեր, բացականչական բառեր և արտահայտություններ, որոնք պատկերավոր են դարձնում պարսկական միջավայրի նկարագիրը: Վերջիններիս կիրառությամբ գրողը խոսքին հաղորդում է ընդգծված արտահայտչականություն: Օրինակ՝ «*Մալա՛մ ալեյքում*, Առուստա՛մ աղա, -ասաց մարդը» (ՎՀ, 86), «*Ալլահը վկա*» (Պ, 107, 1958), «*Ալլահի՛ սիրուն*» (Պ, 82, 1950), «-*Քոֆր մի անի, դերվի՛ շ՛ բարա*, -թախանձեց անցորդը, -մե՛ դք է» (ՎՀ, 543), «*Աֆֆերիմ, սալամ օլլահ*» (ՎՀ, 554) և այլն:

գ) Հերոսների խոսքում կարելի է հանդիպել *զլուխ և լեզու* բառերով կազմված դարձվածային միավորների, որոնք կրում են պարսկերենի ազդեցությունը: Օրինակ՝ *զլուխ քաշել-նայել, տեսնել*՝ «Ուստա Գեղամ, ե՛րբ էս գալու Մեղրիչայի նոնենիներին *զլուխ քաշելու*» (Պ, 65, 1958), *լեզվի բերել-խոսեցնել*⁶ «Դե, նրանք կարծում են, որ իրենց մամլակով կարող են մարդկանց *լեզվի բերել*, սակայն այդ նրանց չի հաջողվում» (ՇՀ, 320):

դ) Վեպերում և պատմվածքներում տեղ գտած պարսկերեն բառերի, անձնանունների, տեղանունների մի մասի բացատրությունը տրվում է հեղինակի կողմից տողատակի հղումներով կամ խոսքաշարային բացատրությամբ: Օրինակ՝ «Եթե նրանք Իրան են մտել հատկապես մեզ կաթսայի մեջ խաշելու համար, կխաշեն, ուզում էս գնա Ահվազ կամ թե չէ բարձրացիր *Դամավանդի*⁷

⁵ Տե՛ս **Բախշինյան Ք., Բիանջյան Հ., Ղազարյան Լ., Մելիքյան Գ.**, Պարսկերենի դասագիրք, Եր., 2011, էջ 52:

⁶ Իրանագետ, թարգմանիչ Է. Բեգիջանյան (բանավոր հաղորդում):

⁷ Դամավանդ-ամենաբարձր լեռը Իրանում, տե՛ս **Ավագյան Ա.**, Շիկացած հող, Եր., 1955, էջ 39:

գագաթը» (ՇՀ, 39), «Գեղամը գնաց գետում լողացավ, եկավ սնդուկից հանեց սև շավարն ու սպիտակ վերնաշապիկը, բեղերին ու մազերին *գոլաբ*⁸ քսեց և *Թուրթի*⁹ աղջկան ձեռքերով ասաց...» (ՎՀ, 21), «-Ես *սահաբ*¹⁰ Գրիգորի սովերն եմ, -ասում էր խոհարարը,-եթե նա գնա աշխարհի ծայրը, ես էլ կգնամ նրա ետևից» (Պ, 185, 1965), «Ռուսները հասել են *Միանե*»¹¹ (ՇՀ, 46), «Նա գյուղից հեռացրեց բոլոր գործակատարներին, հարկահավաքներին ու մի տասնյակ կանանց, որոնց հանգուցյալը պահում էր որպես *սիդե*»¹² (ՇՀ, 359):

Մակայն միշտ չէ, որ ստեղծագործություններում տեղ գտած պարսկերեն բառերը բացատրվում են, հաճախ ընթերցողը համատեքստից է հասկանում բառի բուն իմաստը: Օրինակ՝ *մոլլա*¹³-*հոզնորական*՝ «Գյուղատերը համբուրեց Ղուրանը և մետաքսյա թաշկինակի մեջ ծաված ինչ-որ բան մեկնեց *մոլլային*» (ՇՀ,430), *ջեննաթ-դրախտ*՝ «Թուրթի աղջկան դարձրել էին *ջեննաթի* կանաչ, կանաչ թռչուն» (ՎՀ, 21), *Ֆինջան-բաժակ, գավաթ*՝ «Գյուղացիները նստել էին գետափին և փոքրիկ *ֆինջաններով* թեյ էին խմում» (Վ, 63), *դադաշ-եղբայր*՝ «*Ռադաշ*, թեքվելու ժամանակ ինչո՞ւ ես գազը սեղմում, ախր այդ ճիշտ չէ» (Պ, 139, 1965), *մեջիդ-մահմեդականների աղոթատեղի*՝ «-Իմ կինը խիստ աստվածապաշտ է, ուրբաթ օրերը *մեջիդ* է գնում, հինգշաբթի գիշերները ննջասենյակում Ղուրան է կարդում» (ՇՀ, 79), *մզկիթ-մահմեդականների աղոթավայր, մինարե-մահմեդական մզկիթներին կից աշտարակ*՝ «Եվ Մամեդը կերկերուն ձայնով սկսում է մի պատմություն՝ վիուկի գավազանով կախարդված, ոսկե *մզկիթներով* ու կապույտ *մինարեներով* քաղաքի մասին, յոթ աղբյուրների ու կորցված Յուսուֆի մասին» (Պ,82,1958), *շահի-պարսկական դրամ*՝ «-Կգնա՛մ,-ձչաց Մարքը,-կտանեմ բոլոր հարստությունս, ոչ մի *շահի* չեմ ձգի ձեզ» (Վ, 60): Այս բառերը *էկզոտիզմներ*¹⁴ (*տարաշխարհիկ բառեր*) են, որոնք ունեն ընդգծված արևելյան երանգավորում, բնորոշ են օտար միջավայրին և հազվադեպ են կիրառվում այդ համատեքստից դուրս:

⁸ Գոլաբ-վարդաջուր, տե՛ս **Ավագյան Ա.**, Վերջին հանգրվան, Եր., 1982, էջ 21:

⁹ Թուրթի-աղջկա անուն, նաև նշանակում է թուրթակ (պրսկ.), տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹⁰ Սահաբ-տեք, այդպես են կոչում բնիկներն օտարականներին, տե՛ս **Ավագյան Ա.**, նշվ. աշխ., էջ 487:

¹¹ Միանե-գյուղաքաղաք, Թեհրանից մոտ 350 կիլոմետր հյուսիս-արևմուտք, Ավագյան Ա., Շիկացած հող, Եր., 1955, էջ 359:

¹² Միդե-հարձ, տե՛ս **Ավագյան Ա.**, Շիկացած հող, 1955, էջ 359:

¹³ **Նալբանդյան Ս.**, Պարսկերեն-հայերեն բառարան, Եր., 1987, էջ 667:

¹⁴ Էկզոտիզմները մանրամասնորեն ուսումնասիրված են ռուս լեզվաբանության մեջ: Տե՛ս **Ярцева В.Н.**, Большой энциклопедический словарь, Языкознание, М., 1998, с. 158, **Жеребило Т.Б.**, Словарь лингвистических терминов, М., 2010, с. 461.

Էկզոտիզմները, ի տարբերություն սովորական փոխառությունների, մեծ մասամբ չեն դառնում փոխառու լեզվի ակտիվ բառապաշարի մաս¹⁵, իսկ գեղարվեստական գրականության մեջ դրանք ստեղծում են համապատասխան կոլորիտ, միջավայր: Այսինքն՝ սրանք այն օտար բառերն են, որոնք գոյություն չունեն փոխառող ազգի, ժողովրդի պատկերացումների, կյանքի, կենցաղի նկարագրություններում, բայց ունեն հատուկ ոճական-արտահայտչական երանգավորում. ստեղծում են օտար միջավայրի ճշգրիտ գունավորում: Հարկ է նշել նաև, որ Ֆ. Խլղաթյանը, խոսելով օտար ժողովուրդների կյանքին և կենցաղին վերաբերող բառերի մասին, դրանք անվանում է *տարաշխարհիկ բառեր*¹⁶, իսկ ըստ Էդ. Աղայանի՝ այս կարգի բառերը *հատկական փոխառություններ* են, որոնց առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ մասամբ գործածվում են այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է սվյալ երկրին կամ ժողովրդին¹⁷:

Ավագյանի արձակում էկզոտիզմների կիրառությամբ պարսկական միջավայրի նկարագրությունը դառնում է համոզիչ, ինքնատիպ և պատկերավոր:

Եզրահանգում. Այսպիսով՝ Ավագյանի արձակի բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ հեղինակի խոսքարվեստում տեղ գտած պարսկերեն անձնանունների, տեղանունների, առարկա կամ երևույթ արտահայտող բառերի գործածությունը պայմանավորված է հեղինակի անհատականությամբ, քանի որ վերջինիս գրական աշխարհայացքը ձևավորվել է Թեհրանում, որտեղ ստեղծագործել և սպագրել է նրա առաջին շրջանի ստեղծագործությունները:

ПЕРСИДСКИЕ СЛОВА В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА

Егиазарян С.Э.

Ключевые слова: *персидские слова, топонимы, имена собственные, речевая среда, экзотизмы (иноязычные слова), художественная литература.*

В процессе литературной деятельности А.Авагян часто обращался к своей родине, к тем случаям и событиям, героям, которые оставили неизгладимый след в его воспоминаниях, и, естественно, в его рассказах и романах употребляются персидские слова и словосочетания, способствующие яркому представлению восточной действительности, особого колорита, который присущ персидскому быту. Родина наложила свой отпечаток на его литературное мировоззрение и языковое мышление.

¹⁵ Տե՛ս **Կոжемякина В.А., Колесник Н.Г., Крючкова Т.Б., Парфенова О.С., Трушкова Ю.Б.**, Словарь социолингвистических терминов. М., 2006, с. 243.

¹⁶ Տե՛ս **Խլղաթյան Ֆ.**, Ոճարանական բառարան, Եր., 2000, էջ 159:

¹⁷ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 169:

PERSIAN WORDS IN ABIG AVAGYAN'S PROSE

Yeghiazaryan S.E.

Key words: Persian words, toponymes, personal names, verbal milieu, exotisms (foreign words), fiction.

In his literary activity A. Avagyan often recalled his birth place, the cases and circumstances, heroes that had made a great impression in his memory. It's natural that Persian words and expressions are used in his stories and novels that contribute to represent the eastern environment and the special culture characteristic to Persian common life so spectacularly. His birth place had made a great impression on his literal viewpoint and language thinking.

R e f e r e n c e s

1. Aghababyan S., Sovetahay grakanutyun patmutyun, h. 2, Yerevan, 1965 (in Armenian).
2. Aghababyan S., Sovetakan grakanutyun, Yerevan, 1958, №8 (in Armenian).
3. Arzumanyan L., Garun, Yerevan, 1985, №6 (in Armenian).
4. Aghayan Ed., @ndhanur ev haykakan baragitutyun, Yerevan, 1984 (in Armenian).
5. Baxshinyan Q., Bianjyan H., Ghazaryan L., Meliqyan G., Parskereni dasagirq, Yerevan, 2011 (in Armenian).
6. Khlghatyan F., Vojabanakan bararan, Yerevan, 2000 (in Armenian).
7. Nalbandyan M., Parskeren-hayeren bararan, Yerevan, 1987 (in Armenian).
8. Avagyan A., Vagh@, Yerevan, 1951 (in Armenian).
9. Avagyan A., Shikacac hogh, 1955 (in Armenian).
10. Avagyan A., Nazeli Dalaryan, Yerevan, 1959 (in Armenian).
11. Avagyan A., Patmvacqner, Yerevan, 1962 (in Armenian).
12. Avagyan A., Patmvacqner, Yerevan, 1965 (in Armenian).
13. Avagyan A., Haravayin tend, Yerevan, 1971 (in Armenian).
14. Avagyan A., Yeghel e chi yeghel, Yerevan, 1973 (in Armenian).
15. Kojemyakina V. A., Kolesnik N. G., Kryuchkova T. B., Parfenova O. G., Trushkova Y. B., Slovar sociolingvisticeskix terminov, M. 2006 (in Russian).

*Ընդունվել է՝ 05.10. 2019
Գրախոսվել է՝ 30.10.2019
Հանձնվել է տպ.՝ 21.11. 2019*

Տեղեկություններ հեղինակի մասին

Սաթենիկ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,

ՀԱՊՀ լեզուների գիտակրթական կենտրոնի դասախոս,

Էլ. փոստ՝ esatenik@mail.ru.